

Գնացե՛ք, ասե՛ք

Գնացեք ասեք՝ թագվորահե՛ր, թագվորահե՛ր,
Ծառդ գոված է.
Եզ մի խորվու, տիկ մի գինի,
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝ թագվորամե՛ր, թագվորամե՛ր,
Ծառդ գոված է,
Սել մի սեղան, խոյ մի խորվու,
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝ թագվորաքո՛ւյր, թագվորաքո՛ւյր,
Ծառդ գոված է,
Ուլ մի խորվու, գավ մի գինի
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝ թագվորահա՛րս, թագվորահա՛րս,
Ծառդ գոված է,
Չորս գույգ գուլպա, մի թաշկինակ
Ծառ գովողինն է:

Գնացեք ասեք՝ թագվորաղբե՛ր, թագվորաղբե՛ր,
Ծառդ գոված է,
Երկու ճնճուղ, մեկ գարեհաց
Ծառ գովողինն է: